

չափուելու քաջութիւնն ունենան, երբ դուք յամառիք գործերը ծայրայեղութեան մղել...

Հեռուէն հեռու արձագանքներ կուգան մեզի, «Դաշնակցութեան» «համար prestige» խնդիր է, «պէտք է որ ամէն գնով յաղթենք...»:

—Ո՛ր, Պարոններ, այսպէս մտածելով ահաբեկ սխալի մը մէջ կ'իյնաք: Կուսակցութիւն մը կրնայ սուրիշ կուսակցութեան մը վրայ յաղթանակ տանիլ, կրնայ նոյնիսկ ուրիշ շատ մը կուսակցութեանց, բոլոր կուսակցութեանց յաղթել: Բայց անկարողքն ալ զօրաւոր ըլլալ, չի կրնար յաղթել: Ու ձեր կռիւր Ազգին դէմ է, ո՛չ թէ կուսակցութեան մը դէմ:

Ձեր աչքերը հիմա պղտորուած են, դուք չէք տեսներ կոյ՝ ձեր շուրջը անցած դարձածները: Կատաղած ձիերու նման կը վազէք կոր դէպի անդունդ... Պահ մը կանգ առէք: Դուք ձեր ուղածքը կրնաք ընել միայն այն ժամանակ երբ «Ազգին ալ ուղածը ըլլայ այն»:

Բայց մենք այս խօսքերը որո՞ւ կըսենք... Կարելի՞ է բան է ձրշ մարտութիւնն սորվեցնել մէկու մը որ ո՛չ միտք ունի զայն բաժնելու ո՛չ սիրտ զգալու, ո՛չ ալ կամք գործադրելու...:

Թողէ՛ք ուրիշ, Պարոններ, որ ցաւիւք ձեր վրայ, որովհետեւ վերջապէս դուք ալ այս դժբաղդ ազգին «գիտակից» կոչեցեալ ան գիտակից զսուկներն էք, ինչպէս Ս. Պատրիարքը իր ճառին մէջ կ'ըսէր:

Դացէ՛ք, եթէ տարբեր բան մը չէք կրնար ընել, ձեր ճամբէն ու Ազգն ալ երթայ իր ճամբէն:

Դուք ձեր ուղածն ըրէք, քոնի որ այդչափ կը յամառիք, Ազգն ալ թո՛ղ իր ուղածն ընէ...:

ԼԵԻՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՆԵՆԳԱՄԻՏ ՄԻԱՄԻՏՆԵՐԸ

Կը կարծեմ թէ ճիշդ որակում մը ըրած կըլլամ՝ երբ նենգափառ-միամիտներ կանուանեմ սա ժոն կոչուած թուրքերը: Այնքա տիլ ցոյց տալու համար այդ մարդոց նենգամտութիւնը՝ կը նմանի ջուրին հեղուկ մը ըլլալը հաստատուելու: Եթէ հայերուս մէջ կային դեռ շատ միամիտներ ժոն թուրքերու անկեղծութեանը ու անհեղինակութեանը հաւատացող Ատանայի երկրորդ ահաւոր ջարդը և անկէ վերջ անոնց բռնած նենգ բնութեանը պէտք է ի սպառ ջընջած վերցողած ըլլան զայն այդ կարգի հայերուն մտքէն ալ: Արդ ինչ որ կուգի՝ հոս խօսիլ միմիային ժոններու ստակալի միամտութեանը: Կամ աւելի ճիշդ՝ բառով մը ապուշութեանը մասին է: որ

անոնք միացուցած են իրենց նենգամտութեանը: Այս մարդիկ այն ապուշ հաւատքն ունին թէ՛ ինչպէս որ մեծ քաղաքակիրթ ազգեր երկար ժամանակի մէջ բնական միջոցներով իրենց մէջ կը ձուլեն պղտիկ և քաղաքակիրթութեամբ իրենցմէ շատ վար մնացող ազգերը՝ իրենք ալ նոյն բանը կրնան ընել բռնի միջոցներով և աւելի շատ իրենցմէ անհամեմատ աւելի զարգացած քրիստոնեայ հպատակ ազգերուն համար: Կը կարծեն այս ապուշները թէ՛ Սահմանադրութիւնը հազարամէկ գիշերեան այն հրաշալի գործիքն է, որ յեղափոխութիւններ կը կատարէ ազգերը կը ձուլէ հոգիէ թէ՛ այդ ազգերը իրենցմէ բարձր զարգացում ու քաղաքակիրթութիւն ունենան—և բոլոր համիտեան փափաքներն և ծրագրերն կրնայ գործադրել աւարգել որովհետեւ ուսմանադրութիւն է եղեր այն: Ձե՛ պապամ չէ, դուք ո՛վ ժոններ ինքզինքնիդ մի խաբէք, չէ սահմանադրութիւնը փրկիչ չէ և չի կրնար ըլլալ ինչպէս ատի բռնած եմ այս էջերուն մէջ երկու տարի առաջ ալ: Ձեր փրկութիւնը, Թուրքիոյ փրկութիւնը ուրիշ բանի մէջ է: անիկոյ միայն և միմիային աղայառնքան մէջ է հոն փնտռեցէք, հոն, հոն միայն աչքերնիդ դարձուցէք պարապ տեղը աչքերնիդ ուրիշ տեղեր մի նետէք: ոչ երբեք նեղակեցութեան յարելով ու քառեակ մը կազմելով, ոչ ալ երկեակին յարելով նոր երբեք մը կազմելով դուք այս երկրորդ չէք կրնար փրկել: այս երկրին փրկութիւնը արդարութեամբ գործադրուելու կախում ունի Լսէք ինծի կրնա՞ք դուք թուրքիոյ մէջ արդարութիւն ըստած բանը մտցնել ու գործադրել...: Բայց ես թիւրքիան գիտեմ և ձեզ ալ շատ լաւ կը ճանչնամ... դուք քէ չէք ուզեր աղայառնքանը գործադրել եւ քէ չէք ալ կրնար զայն գործադրել եւս լոյս իսկ անկեղծօրէն ուղեղու ըլլաք...:

Ասի պէտի բացատրեմ ուրիշ յաւանով մը:

Գաւառիկ Գ. Մազմանեան

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խառն ժողովոյ վերջին նիստին մէջ կարգացուցան հայրապետական քանի մը կոնգրեսներ, ամուսնալուծման խնդիրներու մասին: Առաջին կոնգրեսով Ն. Ս. Օ. ծովիւնը կ'ըսէ թէ լրագրական հրատարակութիւններէ տեղեկացած է որ Կրօն, Ժողովը Մշտն Առաջնորդին յանձնած է լրեւալ կրնարու մասին իր խղճին և գործոց հանգամանքին հետեւելով կարգադրութիւններ ընելու հոգը: Այս առթիւ վեհ, հայրապետը

դիտողութիւն կ'ընէ որ, դաւառական առաջնորդներ և կեդրոնի Կրօն, Ժողովը իրենց քննութիւնները կատարելով մանրաժան տեղեկագիրը պէտք է զոր կեն իրեն, որպէս զի ինք վճռէ թէ ամուսնալուծութեան պէտք կա՞յ թէ ոչ:

Այս կոնգրէսի առիթ եղաւ կարծեաց փոխանակութեան Կրօն, Ժողովոյ անդամք գիտել տուին որ օրէնքով և կանոններով սահմանեալ խնդիրներու մէջ իրենք ալ իր սուղեք և ունին ամուսնալուծութիւն վճռելու, բայց այն պարագային երբ խնդրոյն քննութիւնը կանոններով նախատեսեալ չէ, այն ատեն կ'դիմուի բնականաբար վեհ, հայրապետին: Խնդիրը յանձնուեցաւ: Կրօն Ժողովոյ նկատողութեան, բայց ամէն պարագայի մէջ ամուսնական խնդիրներու մանաւանդ ամուսնալուծութիւններու առթիւ, Կրօն, Ժողովոյ և Խառն Ժողովոյ մէջ այնպիսի ազդեցութիւններ ի գործ կ'դրուին, որ աւելի նախամեծար է վեհ, հայրապետին քննութեան և վճռին երկարելու, նկատելով որ Ն. Ս. Օ. ծովիւն անձն աւելի չէղոք և աւելի բարձր է ու է ազդեցութեան և միայն իր խղճի ձայնին կ'հետեւի, հետեւաբար Կրօն, Ժողովը իր արդի կազմութեամբ աւելի գոհ պէտք է ըլլալ որ վեհ, հայրապետը վերջին խօսքն արտասանէ ընտանեկան վէճերու և ամուսնական անհամաձայնութիւններու մէջ:

Երկրորդ կոնգրէսով մը Ս. Հայրապետը կ'ըսէ թէ Պոլսէն զանազան անձեր գիտում կ'ընեն իրեն ամուսնական խնդիրներու համար և երբեմն ալ թերի պաշտօնագիրներ կ'ներկայացնեն, որոնց վրայ որոշում տալ մէկ կամ միւս կողմին զրկանք կ'ըլլայ, ուստի կ'յանձնարարէ որ ամուսնալուծական խնդիր ներկայացուած պահուն աւերով թուղթեր միայն ինք կ'ընեն, Ժողովը այս պահանջն օրինաւոր նկատեց և դիտեց միանգամայն որ Միջմարեանի խնդրոյն մէջ ամուսնալուծման վճիռ տրուած է այս պայմաններ ուն մէջ, որովհետեւ գործին ամբողջ պարութեան չէ պահանջուած Պատրիարքարանէն: Ուստի որոշեց խնդրել Ս. Հայրապետէն որ անհատական դիմումներ նկատողութեան չառնուին ալ ևս Ս. Հայրապետին այս զեկուցումը կ'զգացնէ կարեւորութիւնն ամուսնալուծական վճիռներու համար գիտելու ի սեն, որովհետեւ ինչպէս կ'տեսնուի, Պատրիարքարանի վճիռով զրկուած կողմը իրաւունք կ'ունենայ դիմում ընելու և նոր քննութիւն պահանջելու, որով գործերն աւելի կ'կենդանան:

ՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԸ ԵՒ Բ. ԴՈՒՌԸ

Յունիթըական պայքարը որ սուր կերպարանք մը ստացած էր Յունաց Պատրիարքարանի ու Բ. Դրան միջև, վերջնայն յաղթանակովը գոցուեցաւ առ այժմ: Բացի Մակեդոնիոյ եկեղեցիներու խնդրէն, մեր համակրութիւնը Յունաց կողմը ըլլալով հանդերձ, չենք կարող չի խոստովանիլ թէ Տէր Եօսէփ Պատրիարք անքաղաքագէտ վարձուէր մ'ունեցաւ այս խնդրոյ մէջ, այն է թէ կրթական, գիտութեական, հոգալիւն և ալ հարցերու մասին Յոյնը անվիճելի իրաւունքներ ունենալով միտին, այս պայքարին համար իրենց գլխաւոր շարժառիթ ընտրելով եկեղեցիներու նոր օրէնքը, պատճառ տուին որ իրենք առանձին զէմ դիմաց մնան Բ. Դրան հետ, որ իրեն զօրավիշ ունեցաւ նաև Պուլկար աղբը ամբողջութեամբ:

Յունաց Պատրիարքարանը հազիւ հարիւրի հասնող գեղջկական մատուռներու իրեն սեփականացման այն յամառ պահանջովը կատարելապէս իրեն թշնամի ըրած էր Պուլկարներէն զատ Սերպերը և Ռումէններն ալ Յոյն Պատրիարքարանը եթէ կամաւոր կերպով համակերպած ըլլար Օսմանեան խորհրդարանի ընդունած և Սուլթանէն վաւերացած այդ նոր օրէնքին, և Ազգային Ժողովոյ զուգարման գլխաւոր շարժառիթը այդ ցոյց տուած չի լինէր, ալ անաղմուկ շրջաբերականով մը միայն հրաւիրէր Յոյն պատգամաւորները, ապահովապէս պիտի յաջողէր Ազգ. Ժողովը զուգարմել և հոն խնդիր ընել այն ամէն հարցերը որոնք բոլոր քրիստոնեայ ազգութիւններուն և նոյնիսկ ան-թուրք իսլամ ցեղերուն համակրութիւնը և աշակցութիւնը իրեն պիտի ապահովէին: Այդպէսով յոյն Պատրիարքարանին յարուցած խնդիրը պիտի դառնար ընդհանուր բաղկացուցիչ տարբերութիւնը ընդ դէմ ժոն թուրք կառավարութեան չովքնութեան և ձուլումի քաղաքականութեան: այդ պարագային օտար պետութեանց ալ համակրութիւնը Պատրիարքարանին կողմը պիտի ըլլար և պայքարը այսօրուանին հակառակ, այսինքն Պատրիարքարանին նպաստաւոր արդիւնք պիտի տար: Ուստի կը ցաւինք որ Տէր Եօսէփ Պատրիարք իր համառեալ կարողութեան և փորձառութեան հակառակ, մեծ սղխալ մը գործեց, որով թէ ինքզինք պզտիկցուց և թէ միւս քրիստոնեայ ազգերուն ապագայ անխնայողութեան նախընթաց մը ստեղծած եղաւ:

Բայց այսու հանդերձ մենք որչափ որ սերտած ենք ժոն թուրքերու հոգեբանութիւնը, անոնք չպիտի յապաղին իրենց ալիամբողջ և ազգայնամով ուղղութեամբ նոր առիթներ ստեղծելու որ բոլոր ուղիները տարբեր իրենց դէմ գրգռուին, ու միացեալ ուժով և համաբաշխ ոգով բողոք բառնան «տիրող տարրին» անիրաւութեանցը դէմ:

ԹՈՒՐԿԱՆ, ՌՈՒՄԱՆԱՆ ԵՒ ՊՈԼԿԱՐԱՆ

Պալկանեան երկրներու Սլաւ ազգութիւններուն միջև հնազանդեալ անդամներու մտերմութիւնը լուրջ վտանգ մըն է Օսմանեան տիրապետութեան դէմ: Այս վտանգը չեղաքայքիւն հոս մար բնական էր որ թուրք կառավարութիւնը միջոցներ ձեռք առնէր: Ինչու եւրոպէր Սօփիայի մէջ գումարուած համալուսական գոնդէն և Պուլկարի

հանրային կարծիքին վերագրվող թվերը...
նր պատճառ եղան որ Հագգեր փայլայի
դաշինքը սպառնացող վտանգը գիմազ-
րաւելու նպատակաւ փութկոտ քայ-
լեր առնէ, և ահա թրքոսումէն համա-
ձայնութեան մը հիմը դրուեցաւ, ինչ-
պէս կը հաւաստեն եւրոպական թեր-
թերը: Հակառակ կիսապաշտօնական
հերքումներու, այսօր կը վստահացնեն
թէ Թուրքիոյ և Ռուսիոյ միջև զին-
ուորական համաձայնութիւն մը դաշա-
ցած է գրաւոր կամ բերանացի, որով
եթէ Թուրքիան Պուլկարիոյ դէմ ընդ-
հարուստ մ'ունենայ, Ռուսիան ալ
Պուլկարիոյ կոնսկէն պիտի զարնէ Տօպ-
րուսայի ալի կողմէ կտորը գրաւելու
նպատակաւ: Վա՛մ այս երկիւղով Պուլ-
կարիան պիտի ստիպուի զգուշ վերա-
բերու մ'ունենալ Թուրքիոյ հանդէպ:
Ինչպէս կըսուի, ուստի ախորժակը
կը սրուի, առոյգ և երիտասարդ Պուլ-
կարիան իր անկախութիւնը ձրի կեր-
պով ստանալէ յետոյ շատ համբերել
չուզեր կարեւոր պատառ մըն ալ իւրա-
ցնելու համար թրքական կարկանդա-
կէն: Վասն զի կը խորհի թէ աւելի
սպասելով դժուարութիւնը պիտի ա-
ւելնայ, քանի որ Թուրքիան վերանու-
րդգումը չըջնալին մէջ մտած ըլլալով
որ քան զօր իր թէ՛ ծովային և թէ՛
ցամաքային ուժերը աւելցնելու վրայ
է: Բայց Ռուսիան երբեք զործին չի
գար որ այս կողմէն ալ իրմէ զօրաւոր
դրացի մ'ունենայ: Արդէն մէկ կողմէն
Աւստրո-Հունգարիան և միւս կողմէ
Ռուսիան իբր սահմանակից մեծ պե-
տութիւններ Ռուսիան ճնշելով վի-
ճակի մը ենթարկած են, մին թրանսիլ-
վանիոյ միլիտանտ Ռուսիան ճնշ-
չելով և միւսն ալ Պէսարապիան անի-
բաւօրէն խլած ըլլալով Ռուսիան իր
ձեռքէն ի փոխարէն Տօպրուսայի, ո-
րուն մէջ մասը անկախ Պուլկարիոյ
ձեռքը կը գտնուի, ինչ որ Ռուսիան իր
խոստացումաւ էր: Այս իսկ պատճառաւ
Ռուսիան ինքզինքնին սա մեր Վառ-
նայի և Սիլիստրէի նահանգներուն ա-
պագայ տէրը կը նկատեն: Կեանքար
չեն ուզեր ու Պուլկարիան այնչափ
զօրաւոր ըլլալ որ իրենց անկախութիւն
դառնայ որ մը իրենց փայփայած ե-
րազը իրականացնել:

Ռուսիան աշխարհակալիկան ո՛ր և է
հաւակնութիւն չունի Թուրքիայէ: Մա-
կեդոնիոյ մէջ բնակող փոքրաթիւ Քու-
ցո-Վալաքներու մասին Ռուսիան ցոյց
տուած հոգածութիւնը Թուրքիոյ դէմ
ո՛ր և է հաւակնութեան նկատմամբ չէ:
այլ սպառնալից Պալագանեան հաշուե-
յարդարութեան մը միջոցին, այսինքն
Սերպական թուրքիոյ բաժանման փա-
մուն, Ռուսիան ալ իր իրաւունք-
ները մը ունենալու ձեւին տակ կող-
մադրեն, իր սահմանակից երկրներէն,
հաւանականապէս Պուլկարիոյ մաս
մը երկիր առնել: Ռուսիան իր այս
նպատակին մէջ յաջողելու համար կը
ձգտի որ Պուլկարիան աւելի չի զօրա-
ցած իր առնելիքը առնէ: Այս տեսա-
կէտով Ռուսիան զուտապէս թուրք-
թուրքիան իրենց բնական գաշակիցը
կը նկատեն ցնոր սնորհալիքներ: Տըն-
տեսական տեսակէտով ալ նոյնը նկա-
տելու պատճառ ունին, քանի որ ի-
րենց ծովային մրակ նաւահանգիստը
Պոսոյ նեղուցէն կախում ունի փո-
խադրութեանց մասին:

Պուլկարիան Ռուսիան իր կողմը
գրաւելու համար ստիպեալ է Տօպրու-
սայի այս մասը անոր խոստանալ Մա-
կեդոնիան կարեւոր գրաւում մը ընել
յաջողելու պարագային: Առանց այդ
խոստումին Ռուսիան միշտ արգելք
պիտի ըլլայ Պուլկարիոյ ընդարձակման:

Յ. Պուլկարի

ՊՈԼԿԱՐԱԿԱՆ ԴԱՆԿԱԴԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Անցեալ շաբթուան ի վեր Մալինո-
ֆի դաշինքին հաւաքական հրաժարումը
և զայն յառաջ բերող պատճառները
զանազան խորհրդակցութիւններու ա-
ռիթ ընծայած ըլլալով բաւական ըզ-
րազեցոյց մտքերը և նոյն իսկ հակա-
ռակ կուսակցութիւններու իշխանու-
թեան գլուխը անցնելու անորոշակը
սրեց:

Բայց ամսոյս 3ին վերջապէս նոր
դաշինքը վերակազմուեցաւ կրկին Տէ-
մաքաթի կուսակցութեան պէտ Մ. Ալ-
Մալինոֆի կողմէն: Կեանքար կեր-
պով:

Ալ. Մալինոֆի նախարարպետ ար-
տաքին գործոց և կրօնից նախարար.
Ն Մուշանով ներքին գործոց նախարար
Մ. Թաքէֆի հանրային շինութեանց հա-
խարար Ա. Լեւալէֆ Սելեմական նա-
խար. Թ. Գրեմիշֆի վաճառականական
և երկրագործական նախարար Ի. Սլա-
վէրֆի Դատական նախարար. Վ.
Սօլօֆ կրկական նախարար. Կէնէրալ
Ն. Նիքոլաւի Պատերազմական նախա-
րար

Ամերիկայի մէջ մահուան սպառնա-
լիքը տակ հայ հարուստներէն դրամ
հաւաքելու ամբաստանութեամբ 30
ամիս բանտարկութեան դատապար-
տուած Մարգուկէսեանը իր պատժին
պայմանագրով Սինգի Սինգի բանտին
մէջ լրացունելով ազատ արձակուր է:
Բայց նոյն օրը զրկին ձերբակալուելով
կը Եօրքը բանտը նկատուած է: Ահա
ի՛նչ այս մասին ինչ կը շարորդէ ամե-
րիկեան Տէյլլ քլոքայիս թերթը:

«Բայց այդ ազատութիւնը շատ կար-
ճատեւ եղաւ Սարգուկէսեանը համար.
Որովհետեւ բանտէն դուրս ելլելուն
պէս զանր ձերբակալեց երբ Եօրքէն
զրկուած գաղտնի ոստիկան մը գո-
ղութեան, զրաքաշարթութեան և Վէլք
Սէյլլութեան ամբաստանութեամբ:

«Այս քաղաքի հայ վաճառականները
սկսեցին անհանգստանալ և յուզելու երբ
Մարգուկէսեանը ազատութեան օրն
սկսեց մօտենալ: Որոնցմէ մի քանիսը
վերջերս զիմելով ընդհանուր դատա-
խաղ մ'ունին, յայտնեցին թէ դեռ քն-
նութեան ենթարկուելիք ամբաստանու-
թիւններ կան Էջմ-Փահանայի դէմ, ըստ
որում ստորագրուեցաւ անոր ձեռքա-
կալման հրամանը»:

«Ընդհանուր դատախազի օգնական»
Նոսի բացակայութեան պատճառով
յայտնի չէ թէ Սարգուկէսեանի նոր
դատաւարութիւնը ե՛րբ պիտի սկսի:
«Մարգուկէսեանը 1908-ի սկիզբները
դատապարտուեցաւ այն հիման վրայ,
որով նա մահուան սպառնալիքով 100000
տոլար էր պահանջը Սինգի Գարա-
կէօզեանէն, որուն հայրենակիցներէն
շատերը նամակ էլն ստացել որոնցմով
անոնց մօտ կ'սպառնային եթէ Մար-
գուկէսեան դատապարտուէր»:

— Հենգալիքի օր Պուլկարի մէջ սե-
հողին յանձնուեցաւ 23-27 տարեկան
կիրիկցի երիտասարդ մը, որ քանի
մը ամիս առաջ կիրիկիոյ բանտէն փախ-
չելով եկած Պուլկարիա ապաստանած
էր: Կիրիկիոյ կոտորածներու արհա-
ւիրքը կրկէն յետոյ բանտերու մէջ ալ
կրած տառապանքը իր վրայ ստակալի
կերպով ազդած ըլլալով, մտաւոր
վիճակի ենթարկուած էր և այդ մտա-
տանջութեամբ կաթուած մը կրկնով
փայլեանապէս ինքզինքը կորսնցուցած
և մէկ օրուան մէջ ինքն աւանդած է

այդ կայտառ երիտասարդը. Թրքական
բարբարոսութեան զո՛ւ մըն է այն ալ:
Ինքզինքը Հմայեակ Արսլանեան կը կոչէր
անցագիրը Մանուկ Սուքրասեան թա-
նուցի կը գրէ. երկիրը մայր մը ունի
ողջ:

— Սիլվէնի թաղականութիւնը կազ-
մաւորուեալ և գործերը երեսի վրայ
մնացած ըլլալով, տեղւոյն Տէր Խորէն
քահանային տեղեկագրին վրայ Ազգ.
Պատրիարքարանը Սիլվէն գրկած է Տէր
Յովհան Ա. քն Մանուկեան, կատա-
րել տալու համար ընտրութիւնները:
Ճաւախի է բնի որ մէկ քանիներ ղա-
տապարտելի անհետապետութիւնը կու-
նենան պուլկարիա իրաւաւարութեան հրա-
կոչութիւնը և նախարարութեան վա-
ւերացումը հրաւիրել մեր գուտ ազ-
գային-կրօնական այդ գործին: Տէր
Յովհան հայր Պուլկարի երթալով կը
բողոքէ նահանգապետին Պատրիար-
քարանի իրաւասութեան այս բռնա-
բարոյսը դէմ: Ասոր վրայ նախարա-
րութեան հրաման կուգայ որ ընտ-
րութիւնը կատարուի Հայոց Պատրի-
արքարանի նուիրակին նախագահու-
թեան տակ, առանց միջամտութեան
տեղւոյն կատարութեան:

Նախարարական այս հրամանը պուլ-
կարի կառավարութեան բարեացակա-
մութիւնը ցոյց կուտայ և դաս մըն է
Սիլվէնի և Ռուսիոյ կարգ մը ան-
հետապետ պարոններուն, որոնք գաղ-
թական ազգայինները քուէարկու-
րաւունքէն զրկելու համար մեր ե-
կեղեցոյ վերին հակողութիւնը օտա-
րին յանձնելու ազգագաւ քայլը ա-
ռած են:

— Մամբիկայի ազգայինները կը շա-
րունակեն առատաձեռն կերպով սա-
տար հանդիսանալ մայր հայրենիքի
կրթական գործին, գրէթէ ամէն գաղ-
թալայ մէկ քանի բարենպաստ հաս-
տատութիւններ և ընկերութիւններ
հիմնած է ու կը հիմնէ: Ենցեալ շաբ-
թու Կրանիթ Սիլվի մէջ հանդէս մը
կազմակերպուելով, հանգանակութիւն
մը բացուեցաւ ի նպաստ Հայրիկ Մա-
մուլ կոչուած Ֆոնտին, մամուլ մը
նուիրելու համար Վարազայ վարժա-
րանին յիսնամիս յորեկանին առթիւ:
Հանգանակութեան արգիւնքը եղաւ
600 տոլար: Փէթըրսընի մէջ կազմուած
է որբանամ մը որ 4 որբեր կը պահէ
Ձէյթունի և Տրգրանակերտի մէջ:

— Նախկին պատրիարք Օրմանեան
դէմ եղած ամբաստանութիւնները քն-
նող յանձնաժողովը 200 էջոց տեղե-
կագիր մը պատրաստած է զոր յառա-
ջիկայ նրատին պիտի ներկայացնէ Ազգ.
Նրեսի. Ժողովին: Ամբաստանութեանց
էն ծանրը Լաւէյ քաղաւոս հեռագրի
մասին ըլլալով հանդերձ, անոր քն-
նութեան կ'երեւայ թէ թերի մը մէջ
իր պատճէն հրատարակուած հեռա-
գիրը գոյութիւն չունի. ուղղակի պաշ-
տօնական աղբիւրէ ստացուած պատ-
հէն կը հասկցուր թէ «Թուրքիոյ մը

ղովուղը կայսեր հովանիին տակ ան-
գոր կապրի» բացատրութիւնը չկայ:
Ուստի Օրմանեանի մասին ամենաար-
դար վճիռը Ազգ. Ժողովը պիտի ար-
ձակէ ի մօտոյ:

— Ս. Պատրիարքը տակաւին իր պաշ-
տօնին գլուխը չէ եկած տկարութեան
պատճառաւ, որ յառաջ եկած էր յու-
զումէ: Գատրգիւղի երկու ուսուցիչնե-
րուն գործած լրութեանը հետեւանքով:
Այդ երկուքը ուրախ օր ևս 10-20
թաղեցիներու հետ Գաղ. Ժողովին ներ-
կայանալով, զայն անարգած և ան-
պատուած են ու կրկին պահանջած ան-
պատճառ իրենց պաշտօնին մէջ հաս-
տատուելը: Նախապէս Գատրգիւղի Թաղ.
Խորհուրդին կարգադրութեան: Մար-
գիկը կրկնած ամբողջաւոր կուսակ-
ցութեան մը, անպատճառ և զօրով
մննք ձեռք վարժապետ պիտի ըլլանք
կրսն և կը յայտարարեն եղեր թէ
«կուտ մը իսկ չեն տար Ազգ. Իշխա-
նութեան»:

— Երուսաղէմի շրջականները Յակոբ
Կիրակոսեան անունով ուխտաւոր մը
սպաննուած է Ֆէլլաներէն քոնց հար-
ցումին ի պատասխան «քրիստոնեայ
եմ» ըսե ու համար:

ՍՏԱՑՈՒՄԸ ԳԻՐԲԵՐ

«ԵՐԱՆԿԱՆԻԹԵԱՆ ԵՐԿԻՐԸ» գրեց
Յովհաննէս Խ Նազարեան. էջ 96.
գին 3 դր:

«ՃԵՐՐԵՐ» 50 տարուան կեանքը
և գործը: Թարգմանեց Վ. Գալազ-
ճեան էջ 80. գին 3 դր:

«ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ», գրեց
Յովհ. Խ Նազարեան. 112 է. գին 4
դր:

Այս գիրքերու կեդրոնատեղին է Կ.
Պոլիս Զարդարեան եղբայր և Պ. Պա-
լենց Գրատունները:

Դ. Ա. Ա. Ի. Ի. Բ. Ե. Բ.

ԳԱՆՁԱՐԱՆ. Ընթերցանութեան գիրք
պատկերազարդ միջին գոտի: Գին
Արամ Անտոնեանի հեղինակութիւն:
Գին 8 դր:

ԳԱՆՁԱՐԱՆ, Ընթ. քանութեան գիրք
տարական գոտի: Գին
5 դր: Հեղինակ նոյն

ԳՐԻՍՏՈՐԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐ-
դապետութիւնը. դասագիրք բարձրա-
գոյն վարժարաններու համար: Հոյի-
նակութիւն Գին. Տէր Մուշեղ Կարա-
կոպտի: Գին 5 դր:

ՆՈՐ ԾՈՂԱՓՈԽԻՆՔ, Ընթերցարան
մայրենի լեզուի հայ տղաց, պատկե-
րազարդ: Գին 1 դր:

ՆՈՐ ՔՆՐԱԿԱՆ Ֆրանսերէն, տղա-
ոց և չորսամեակեան համար: Յօդոց
Միհրան Յովհաննէսեան: Գին 60 փա-
րայ:

Այս դասագիրքերու հրատարակիչն է
Ս. Փրլընեան գրատունը ի Կ. Պոլիս.
հին է նաև վաճառման կեդրոնատեղին:

ՏՊԱՐԱՆ ԵՐԱՆԿԱՆԻԹԵԱՆ

ԵՐ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԱԿՈՒՐ ՆԻ ԶԱՓԱՆՈՐ Գ. ՆԵՐՈՎ
ԱՄԵՆ ՏԵՍԱՆ ԳԱՐԵՆԻ
Հարսանեկան Հրապարակի, Այցատու, Նամակագրի, Պահաւան
Պահաւանեկ, Հաւուրեղբեր և ուրիշ գործեր
Հայերէն, Պոլիսերէն, Ռուսերէն և Ռուսերէն
Մեզ դիմողներու ճաշակէն գոյացում տալու համար Տպարանս նոր
բերել տուած է ամենալեզբուն սխտէմի
գործիքներ և տառեր
ՅԱՆՁՆԱՐԱՆԻԹԻՒՆԻՆ ԿԸՆԴՈՒՆՈՒՆԻՆ ԿԱՆԻՍՏԱՆԻՆ ՄԸ

Տպարան «Իրանեֆ»ի Կառնու